ԵՂԱՆԱԿԻ ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ ԸՍՏ ԵՐԿՐԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՉԱՏԻԿՅԱՆ

Անհիշելի ժամանակներից մարդը ձգտել է կանխագուշակել եղանակը։ Անձրևն ու ձյունը, երաշտն ու ավերիչ քամիները, ջրհեղեղներն ու բնության այլ տարերքները մարդուն ստիպել են փնտրել, ձեռք բերել պաշտպանական միջոցներ։ Նա յուրովի պայքարել է այդ երևույթների դեմ՝ ապաստանել է անձավներում, կառուցել բնակարան, կրել հագուստներ և երկար տարիների իր պրակտիկ գործունեության շնորհիվ ձեռք է բերել բազմաթիվ հնարներ, կուտակել հմտություններ՝ եղանակի փոփոխությունները վաղօրոք կանխագուշակելու համար։

Եղանակի կանխագուշակման ժողովրդական հնարները բազմազան են, դրանք ստուգվել են ժամանակի ընթացքում, և այժմ ժողովրդական այս գիտելիքների ուսումնասիրությունը ազգագրորեն ունի պրակտիկ նշանակություն։ Հայ ժողովուրդը եղանակը կանխագուշակել է արևի ճառագայթների գույնով, ինտենսիվությամբ, լուսնի դիրքով ու պայծառությամբ, ամպերի ձևով ու հեռավորությամբ, կենդանիների ու թռչունների վարքով, մարդու զգայարաններով և այլ միջոցներով։

Փորձենք 1972—73 թթ. Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում՝ Կրասնոսելսկում, Շամշադինում, Նոյեմբերյանում և Իջևանում, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կազմակերպած գիտարշավի ժամանակ մեր հավաքած նյութերի և հայ մատենագրության մեջ ավանդված տեղեկությունների համեմատական քննության միջոցով բացահայտել հայոց մեջ եղանակի կանխագուշակման ժողովրդական հնարները և տալ դրանց գիտական նկարագրությունը։*

Եղանակի կանխագուշակումը մարդու մարմնական զգայարանների միջոցով։ *Մարդու երկար տարիների պրակտիկ գործունեությունը հնարավորություն տվեց ոչ միայն գտնել մթնոլորտային որոշ երևույթների առաջացման պատճառներն ու զարգացման օրինաչափությունները, այլև դրանք կանխատեսելու միջոցները։*

Կլիմայական գործոնների օգտագործումը բուժական և առողջարար նպատակով սկսվել է շատ հնուց։ Հայտնի է, որ նույնիսկ անձավային մարդն իր կացարանը հարմարեցնում էր այնպես, որ անձավի ելքը լինի դեպի հարավ կամ արևելք, այսինքն՝ դեպի արեգակնային լույսը։ «Նրան, ով ուսումնասիրել է քամիները, կայծակներն ու եղանակը, հայտնի է հիվանդությունների ծագումը»,—պնդում էր 16-րդ դարի բժիշկ Պարացելսը[1]։ Անձրևոտ եղանակից առաջ մարդն օդի պակաս է զգում, քունը տանում է, հաճախ, հատկապես ռևմատիզմով տառապող հիվանդների մոտ, ոսկորներում և հոդերում ցավեր են առաջանում, ականջները խշշում են և այլն։ Դեռևս Հիպոկրատը նշում էր եղանակի փոփոխությանը նախորդող ցավերի մասին։ Միջին դարերում այդ ախտանիշների մասին խոսվում է իրավաբանական դեկրետներում։ 9-րդ դարում Ֆրիսլանդական (Նիդերլանդների մարզերից մեկը) օրենքների ժողովածուում գրված էր հետևյալը. «Խեղդություն պատճառելու համար, եթե այն իրենից հետո թողնում է եղանակի փոփոխությանը զգայուն սպի, նշա-

---

* *Դիտարշավի նյութերը պահվում են մեր անձնական արխիվում։*

1 *«Ավանգարդ», 20. V. 1973։*

նակվում է տուգանք»։ 14-րդ դարի որոշ իրավաբանական փաստաթղթերում նշվում է նաև, որ վերք հասցնելու համար սահմանվում է ավելի ծանր պատիժ, եթե դա հետագայում եղանակի փոփոխության ժամանակ հայցվորին ցավեր է պատճառում[2]։

Հնագույն ժամանակներից մարդը նկատել է, որ եղանակի կտրուկ տատանումը փոփոխություն է առաջացնում նաև իր օրգանիզմում։ Նկատել է, որ որոշ մարդկանց օրգանիզմը գերզգայուն է մթնոլորտում կատարվող առանձին երևույթների նկատմամբ։ Դրանով էլ պայմանավորված է եղանակը կանխատեսելու նրանց զարմանալի հատկությունը։ Որոշ երկրներում այդպիսի մարդկանց անվանում են «եղանակի մարգարեներ»։ Այդպիսի «եղանակի մարգարեներ» ունի նաև հայ ժողովուրդը։ Այսպես օրինակ, մեր ուսումնասիրած շրջաններում գրեթե բոլոր ասացողները գիտեն, որ երբ մարդու ոսկորները և հոդերը ցավում են, անպայման անձրև է գալու։ Այգեձորցի Հակոբ Սարիկյանը և Թովուզցի Սերգո Խաչատրյանը նկատել են, որ անձրևից առաջ մարդը սկսում է ձգվել և ննջել[3]։

Տվյալ օրվա եղանակը Շամշադինում գուշակում են այսպես. եթե առավոտյան մարդու շնչառությունը վատ է լինում, նշանակում է այդ օրն անձրև է գալու[4]։ Բանն այն է, որ տեղումներից առաջ օդի հարաբերական խոնավությունն ավելանում է, և որքան մեծ է դրա տոկոսը, այնքան տեղումները հավանական են։ Խոնավության մեծ քանակի հետևանքով էլ անձրևից, հատկապես, ամպրոպից առաջ օդը դառնում է հեղձուցիչ, և մարդու շնչառությունը ծանրանում է։ Իսկ երկու-երեք ժամ հետո սպասվելիք կարկուտի կամ անձրևի գալը գուշակում են աչ, ոմանք էլ ձախ ականջի քորով[5]։ Ասացողների մի մասն էլ գտնում է, որ երբ քոր է գալիս աչ ականջը, անձրև է գալիս հաջորդ օրը[6]։ Սա հավանաբար մթնոլորտային ճնշման անկման հետևանք է, որի ազդեցությամբ ականջի թմբկաթաղանթը դուրս է սեղմվում և առաջացնում է քորի զգացում։ Եվ իրոք, այս ձևով հնարավոր է կանխագուշակել եղանակը։

Դաշտային ուսումնասիրությունը ցույց տվեց, որ եղանակի փոփոխությանն առանձնապես ուժեղ են արձագանքում հիվանդ մարդիկ, որ եղանակ կանխատեսողների մեծ մասը տառապում է այս կամ այն հիվանդություններով։ Կողբեցի Աղասի Բարսեղյանը ունի «լումբագո» կոչվող նյարդային հիվանդությունը. անձրևից երկու-երեք ժամ առաջ նրա մեջքը ցավում է, իսկ հետո՝ դադարում[7]։ Ահա դա էլ նրան հնարավորություն է տալիս նախօրոք իմանալ գալիք անձրևի մասին և ցավի թուլացման հետ միասին գուշակել անձրևի տևողությունը։ Թովուզցի Սահակ Կլեկչյանը եղանակը գուշակում է երիկամների ցավի միջոցով, նրա երիկամները սկսում են ցավել անձրև գալուց մեկ-երկու օր առաջ[8]։

Եղանակի փոփոխման նկատմամբ հատկապես զգայուն են վերքերը, սպիները, կոտրվածքները։ Հայ մարդը նկատել է (և դրանով ևս կատարել է եղանակի՝ կանխագուշակում), որ վերքերը, սպիները, ցավազգաց տեղերը անձրևից երկու-երեք ժամ առաջ սկսում են ցավել, մրմռալ[9]։ Կողբեցի Վազինակ Ղազարյանը թևը կորցրել է Հայրենական մեծ պատերազմի ժամանակ

---

2 Նույն տեղում։

3 Տե՛ս Հեղինակի դաշտային նյութերը, 1972, տետր № 1, էջ 3, 35 (այսուհետև՝ ԴՆ, № 1, 2)։

4 ԴՆ, № 1, էջ 40։

5 Նույն տեղում, էջ 19, 46, № 2, էջ 8, 26։

6 ԴՆ, № 2, էջ 12, 37։

7 Նույն տեղում, էջ 32։

8 ԴՆ, № 1, էջ 43։

9 ԴՆ, № 2, էջ 46։

և այժմ սպիով կարողանում է գուշակել եղանակը։ Սպին երբ սկսում է ուժեղ ծակծկել, նշանակում է, որ ուր-որ է անձրև կգա։ Ամպամած ժամանակ ծակծկոցը լինում է միանվագ, իսկ հենց անձրևի ժամանակ՝ սուր[10]։

Այսպիսով, դժվար չէ բերված օրինակներից նկատել, որ «եղանակի գուշակները» հիմնականում նախազգում են անձրևի գալը, և դա ամենևին էլ պատահական չէ, եթե, ի նկատի ունենալով անձրևից առաջ մթնոլորտում տեղի ունեցող հիմնական տարրերի փոփոխությունները, պարզենք, թե կլիմայական որ գործոնները կարող են ազդել մարդու օրգանիզմի վրա և ինչպես։

Ըստ Ի. Պասինկովի, այդ գործոններից են բարոմետրիկական ճնշումը, օդի ջերմաստիճանը, օդի խոնավությունը (բացարձակ և հարաբերական), քամին (ուժգնությունն ու տեսակը), ամպամածությունը, արեգակնային ճառագայթները, օդի քիմիական բաղադրությունը և այլն[11]։ Հայտնի է, որ տեղումներից առաջ վերոհիշյալ բոլոր տարրերը փոփոխության են ենթարկվում։ Այնուհետև, Ի. Պասինկովը ավելացնում է. «Օրգանիզմի վրա օդերևութաբանական տարրերի ազդեցությունն է վկայում այն փաստը, որ մի քանի հիվանդություններ մասսայական բնույթ են ստանում եղանակի փոփոխության ժամանակ»[12]։

Կլիմայի այս կամ այն գործոնի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա չափազանց բարդ է։ Ըստ Գ. Մեզերնեցկու, կարելի է տարբերել օրգանիզմի վրա ազդող կլիմայական գործոնների հետևյալ տեսակները՝ 1. գործոններ, որոնք ազդում են մաշկի միջոցով՝ արևի ճառագայթները, օդի ջերմաստիճանը, քամին, խոնավությունը, օդի իոնացումը, տեղումները, մթնոլորտային ճնշումը, 2. գործոններ, որոնք ազդում են շնչառության միջոցով՝ օդի ջերմաստիճանը, խոնավությունը, օդի իոնացումը, քամին, օդի մաքրությունը՝ քիմիական և մեխանիկական իմաստով, 3. գործոններ, որոնք ազդում են զգայարանների միջոցով՝ արևի լույսը, օդի թափանցելիությունը, լանդշաֆտի գույներն ու ձևերը, քամիները, ամպրոպները[13]։ Ահա այս ամենից հետո պարզ է լինում ասացող շավարշավանցի Գրիշա Թումանյանի եղանակը նախազգալու ունակությունը։ Նա պատերազմի ժամանակ վիրավորվել է, և սպին անձրևից, ընդհանրապես, տեղումներից երկու-երեք օր առաջ ցավում է[14]։

Բերված օրինակներից չի կարելի եզրակացնել, որ միայն հիվանդ մարդը կարող է նախազգալ եղանակի փոփոխությունը։ Առօրյա կյանքում հաճախ հանդիպում ենք «անառիթ» գրգռվածությունների, ցրվածության «անպատճառ» նոպաների, տրամադրության անտեղի անկման և այլնի, որոնք արդի ֆիզիոլոգիան և ֆիզիոթերապիան կապում են եղանակի փոփոխության հետ։ Կան մարդիկ, որոնք, հայտնի չէ գերզգայարանների, թե գերուշադրության հետևանքով կարողանում են իրենց փորձի ու հմտության միջոցով ճիշտ կանխագուշակել եղանակը։ Այսպես, օրինակ, այգեձորցի Համբարձում Մաղաքյանը նկատել է, որ իր ախորժակի անկումը այդ օրը անձրև գալու նշան է[15]։ Այս ձևով կատարվող կանխագուշակումը հավանական է այն պատճառով, որ անձրևից առաջ մթնոլորտային ճնշումը իջնում է, իսկ աղեստամոքսային տրակտում գտնվող գազերն ընդարձակվում են, որը և ուղեկցվում է ախորժակի անկմամբ։

Եղանակի կանխագուշակումը կենդանիների, սողունների, թռչունների, միջատների միջոցով։ Հնագույն ժամանակներից շատ ժողովուրդներ, այդ թվում և հայերը, եղանակի տատանումների հետ միասին փոփոխություններ են նկատել կենդանիների, թռչունների, սողունների, միջատների վարքի մեջ։

---

10 Նույն տեղում, էջ 17։

11 Е. И. Пасынков, Общая физиотерапия, М., 1969, с. 285.

12 Նույն տեղում, էջ 285։

13 Նույն տեղում, էջ 289

14 Դն, № 2, էջ 46։

15 Դն, № 1, էջ 16։

Այգեձորցի Սառիկյան Հակոբը ասում է. երբ կենդանիներն ու թռչունները սկսում են անհանգստության նշաններ ցույց տալ, դա համարյա միշտ նշանակում է, որ շուտով եղանակը կվատանա, անձրև կգա, սառնամանիք կլինի կամ ուժեղ քամի կփչի։ Մինչդեռ կենդանիների ծույլ, հանգիստ վիճակը օրերի մոտալուտ տաքացման նշան է։ Երբ ծղրիդները երգում են, լավ եղանակ է լինելու[16]։

Եղանակի փոփոխության հետ կապված կենդանիների, թռչունների, միջատների, սողունների վարքի փոփոխությունները հայ ժողովուրդը, ինչպես նաև այլ ժողովուրդներ օգտագործել են եղանակը կանխագուշակելու համար։ Այգեձորցի Կարապետ Քարտաշյանը եղանակը կանխագուշակում է այսպես, ծիծեռնակները երբ ցածր են թռչում՝ անձրև է գալու[17]։ Դրեթե նմանօրինակ տեղեկություն կա «Գիրք վաստակոցում»՝ «Յորժամ տեսանես գծիծեռն ավելի խաղալ ի վերայ ջրոյն անձրևի նշան է»[18]։ Այս ձևով կատարվող դուշակումը ճիշտ է, քանի որ անձրևից առաջ օդի հարաբերական խոնավությունը բարձրանում է, միջատների թևիկները խոնավանում են և շատ բարձր թռչել չեն կարողանում, իսկ ծիծեռնակներն էլ, որսի դուրս գալով, ստիպված են լինում թռչել համեմատաբար ցածր։

Ագռավը մեր ժողովրդի համար հանդիսացել է եղանակի հիմնական «դուշակներից» մեկը։ Դեռևս Արատոս Սոլացին այդ մասին գրել է՝ «Եվ կամ ագռավն է անձրև դուշակում, Զևսի կաթիլին ձայնով նմանվում, կամ նորից ճչում կոնչում են հար, թևերը բախում սուլում են երկար»[19]։ Այնուհետև Ա. Սոլացին գրում է. «Ագռավ, արջագռավ երամներն առած, անձրևի դուշակ Զևսից առաքված, թռչում են դաշտում, անգղի պես ճչում»[20]։

Ներկայումս եղանակի կանխագուշակման այս ձևը մեր ուսումնասիրած շրջաններում պահպանվել և կիրառվում է. սակայն որոշ փոփոխություններով՝ «ագռավները, երբ անձրևի ժամանակ կռռում են, նշանակում է անձրևը երկար կտևի»[21] կամ «ագռավը, երբ շատ դա-դա է անում, նշանակում է անձրևելու է»[22]։

Դաշտային և մատենագրական բազմաթիվ նյութեր կան, որոնցում եղանակի կանխագուշակման հիմնական միջոցը հանդիսանում են զանազան թռչունների ձայնարձակումները՝ ճայերի ճիչը, ճնճղուկների ծլվլոցը, ծղրիդների երգը և այլն։ Այսպես, օրինակ, երբ ճնճղուկը երգում է ընդհատումներով, ճռճռոցի նման, նշանակում է այդ օրը անձրևելու է[23]։ Այգեձորցի Հակոբ Սառիկյանը եղանակը կանխագուշակում է «թիշ» կոչվող թռչունի երգով, որը ասացողի վկայությամբ, ձմռանը երբեք չի երգում։ Թիշը բալի գույնի թռչուն է, հավի ձվից փոքր, եթե երգում է, ուրեմն մեկ ժամ հետո անձրև կգա[24]։

Այգեձորցիների համար եղանակի դուշակ է նաև «պապաճիշտ» կոչվող թռչունը՝ երբ պապաճիշտը (թիշի չափ թռչուն է) երգելով ասում է «պապաճիշտ, պապաճիշտ», ուրեմն հաջորդ օրը անձրևելու է։ Ասացողների համաձայն, պապաճիշտի երգի մի այլ տեսակի ժամանակ, եթե ամպամած էլ լինի՝ եղանակը կբացվի։

---

16 Նույն տեղում, էջ 12։

17 Նույն տեղում, էջ 11։

18 «Գիրք վաստակոց», Վենետիկ, 1877, էջ 11։

19 Գ. Վ. Աբգարյան, Ա. Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանոց» աշխատության մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 82)։

20 Նույն տեղում։

21 Դն, № 1, էջ 51։

22 Դն, № 2, էջ 45։

23 Նույն տեղում, էջ 63։

24 Դն, № 1, էջ 19։

Եղանակի փոփոխման հետ միասին փոխվում է նաև հավերի վարքը։ Հայ գյուղացին այդ նկատել է և կիրառել եղանակը կանխագուշակելու համար։ Ե՛վ այդեհորցի, և՛ Թովուզցի, և՛ Նոյեմբերյանցի, և՛ շավարշավանցի եղանակի գուշակներն ասում են՝ «հավը երբ թևատակը քորում է, անձրև գալու նշան է»։ Նույն ձևով են եղանակը գուշակել Ա. Շիրակացու ժամանակակիցները. «Ցորժամ ընտանի հաւք և աստղակտուցք և ձկնաադք կտեն ի բանս գալով շարժեն զթեւս իւրեանց՝ յուղմունք ամպոց լինի»[25]։

Գ. Մանդակունին հաղորդում է չվող թռչունների վարքի միջոցով կատարվող եղանակի կանխագուշակումների մասին. «Կռունկն եթե ժամանակից առաջ գա, աշունը երկար կտևե և ձմեռը անձրև ու ձյուն շատ կլինի, եթե ուշ գա՝ ձմեռն էլ ուշ կմնա»[26]։ «Ցուրտ և սառույց լինելու նշաններն են, երբ որ սագերը, կռունկները և ուրիշ տեղափոխ թռչունները խումբ-խումբ ժողովվում են»[27]։ Ինչպես երևում է բերված օրինակներից, չվող թռչունների վարմունքի միջոցով հիմնականում կատարվել են երկարաժամկետային, կարելի է նույնիսկ ասել սեզոնային կանխագուշակումներ (որոնց կատարումը նույնիսկ ներկա տեխնիկայի պայմաններում դժվար է), որոնց հավանականությունը այնքան էլ մեծ չէ և, հետևաբար, այդ է պատճառը, որ ներկայումս մեր ուսումնասիրած շրջաններում չեն պահպանվել նմանօրինակ գուշակումներ։ Այդուհանդերձ, Թովուզցի Կարապետ Արզումանյանը համոզված պնդում է այն հանրահայտ իրողությունը, որ կռունկների չվելը ձմռան գալու նշան է[28]։ Ուսումնասիրված շրջաններում հատկապես շատ են տարածված մոշահավի (այստեղ տարածված թռչուն է) երգի միջոցով կատարվող կանխագուշակումները։ Մոշահավը անձրևից առաջ սկսում է երգել[29]։

«Ցորժամ եղինք ջոկեալ զուղորդն՝ կայտառելով երթան ձմռան նշան է»[30]։ Կենդանիները ևս նախազգում են եղանակի փոփոխությունը և հայ ժողովրդի համար նրանց վարքի յուրաքանչյուրի փոփոխում՝ լինի դա խրխինջ, թե «սլարտ», լուսնահաչ թե բառաչ, օդ հոտոտել, թե երկար արոջել եղանակի կանխագուշակման նոր միջոց է հանդիսացել։ Կողբեցի Գևորգ Բարսեղյանը անձրևի գալու նշան է համարում ոչխարների «խաղը», իսկ նույն գյուղացի Աղասի Բարսեղյանն անձրևի գալը գուշակում է խոզի վազվզելու, «պարի» միջոցով։ Նոյեմբերյանցի Նուբար Գիշյանը գտնում է, որ երբ գոմեշն է «պարում», այն ժամանակ է անձրև գալիս։

Ուսումնասիրված շրջաններում կենդանիների մեջ լավ «եղանակագուշակը» համարվում է ոչխարը, որը նախազգում է և՛ կարկուտը, և՛ անձրևը, և՛ առաջին ձյունը։ Հին բաշքենդցի Թոխտալյան Մագտաղը ասում է, որ երբ ամպրոպ է լինում և կարկուտ պետք է գա, ոչխարը փախչում է անտառ կամ որևէ տեղ պատսպարվում[31]։ Առավոտյան, երբ անձրև է սպասվում, ոչխարը հանդ չի գնում[32]։ Աշնան վերջին ոչխարը երեկոյան, եթե տուն չի գալիս և անընդհատ արածում է, նշանակում է շուտով ձյուն կգա[33]։ Անասունների միջոցով եղանակը կանխագուշակելու մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում մատենագիրները. «Ցորժամ խոյք յերեկօրեա բառաչեն՝ զամպ նշանակէ։ Ցորժամ արջառ և այլ անասունք զերկիր փորեն՝ զդէմս ի հարաւ արարեալ՝ ձմեռն նշանակէ»[34]։ Այժմ Թովուզցի և այգեհորցի եղանակագուշակ-

---

25 «Ա. Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 351։

26 Գ. Մանդակունի, Ոսկե բարեկամ հայ ընտանեաց, Թիֆլիս, 1912, էջ 397։

27 Նույն տեղում։

28 Դն, № 1, էջ 37։

29 Նույն տեղում, էջ 3, 37, 40։

30 Գ. Վ. Արգարյան, նշվ. աշխ., էջ 92։

31 Դն, № 1, էջ 37։

32 Դն, № 2, էջ 32։

33 Դն, № 1, էջ 45։

34 Գ. Վ. Արգարյան, նշվ. աշխ., էջ 91։

ները գրեթե նույն ձևով են կանխագուշակում եղանակը՝ «կովը, եզը, ոչխարը երբ նայում են հարավ, հոտոտում օդը և դեպի հարավ էլ արածում են, ուրեմն անպայման անձրև կամ ձյուն կգա»[35]։

«Գիրք վաստակոցի» համաձայն անասունների դեպի հյուսիս գնալն անձրևի ազդակ է»[36]։ Նույնը նշում է նաև Գ. Մանդակունին. «բոլոր կենդանիների դեպի հյուսիս փախչելը անձրևի նշան է»[37]։ Թովուզցի Մելիք Սիմոնյանը անձրև է գուշակել նաև այն ժամանակ, երբ անասուններն արածել են խմբով[38]։

Թովուզցի Արզումանյան Հովհաննեսը և Կլեկչյան Սահակը գուշակել են այսպես՝ «կովը, երբ բառաչելով հանդից փախչում է, կարկուտի կամ հեղեղի նշան է»[39]։ Կողբեցի Մարիամ Արզումանյանն ասում է՝ «անասունները կարկուտից առաջ հավաքվում են, իրար պոզերով խփում, բառաչում, պոչերը շարժում»[40]։

Ընտանի կենդանիներից շունը ևս եղանակի փոփոխման ժամանակ փոխում է իր վարքը, դառնում ավելի սիրալիր ու կարծես դրանով նախազգուշացնում մարդուն սպասվելիք անձրևի, կարկուտի մասին։ Թովուզցի Խաչատրյան Հակոբը և ծովիզցի Սահրադյան Արշակը ասում են, որ երբ այդ օրը կարկուտ է սպասվում, շները սկսում են ոռնալ[41]։ Մեկ երկու օր հետո սպասվող անձրևը Սարիկյան Հակոբը գուշակում է այս ձևով՝ շան քթից երբ ջուր է կաթում, նշանակում է անձրև կգա[42]։ Թովուզցի Հակոբ Խաչատրյանի համար եղանակի գուշակման միջոց է շան անորոշ հաչոցը՝ գիշերը երբ շները լուսնին նայելով սկսում են հաչել, հաջորդ օրը տեղումներ են սպասվում[43]։ Շան վարմունքի միջոցով եղանակի կանխագուշակման ձևը վկայում են Մատենադարանում պահվող № 1973 ձեռագրի հետևյալ տողերը. «Ցորժամ շունք զերկիր փորեն՝ զձմեռն նշանակէ»[44]։

Հետաքրքիր է այն փաստը, որ հայ մարդու համար եղանակի կանխագուշակման միջոց է հանդիսացել նույնիսկ միջատների վարմունքը։ Նա ընդհանրություն է գտել եղանակի փոփոխման և միջատների վարքի միջև և դրանով կատարել եղանակի կանխագուշակում։ Հին բաշքենդցի Սանամ Առաքելյանը դեռևս վաղ առավոտյան մեղուների վարմունքից գուշակում է, թե ինչպիսին կլինի այդ օրվա եղանակը. այսպես, մեղուն եթե առավոտյան փեթակից դուրս գալիս մի քանի շրջան է անում և ետ վերադառնում իր փեթակը, նշանակում է այդ օրն անձրևելու է, կարող է նույնիսկ կարկուտ գալ[45]։

Տվյալ օրվա եղանակի կանխագուշակման այդ ձևի մասին Գ. Մանդակունին գրում է. «Եթե առավոտուց մուները, իշամեղուները, մժեղները և պիծակները շատանան, մամուկները օդի մեջ կամ բուսաց վերամ-սկսին պարել՝ օդը լավանալու նշան է»[46]։ Իսկ Թովուզցի Հակոբ Արզումանյանը և այգեձորցի Հակոբ Սարիկյանը գտնում են, որ երբ մեղուները հանդից արագ փախչում ու պատսպարվում են փեթակներում, ապա նշանակում է, որ անձրև կամ կարկուտ է գալու[47]։

---

35 Դն, № 1, էջ 4, 28, 39։
36 «Գիրք վաստակոց», էջ 13։
37 Դն, № 1, էջ 37, 39։
38 Նույն տեղում, էջ 51։
39 Նույն տեղում, էջ 37, 38։
40 Դն, № 2, էջ 22։
41 Դն, № 1, էջ 29, 57։
42 Նույն տեղում, էջ 4։
43 Նույն տեղում, էջ 28։
44 Գ. Վ. Աբգարյան, նշվ. աշխ., էջ 92։
45 Դն, № 2, էջ 62։
46 Գ. Մանդակունի, նշվ. աշխ., էջ 401։
47 Դն, № 1, էջ 12, 37։

Մեր ուսումնասիրած շրջաններում եղանակի կանխագուշակման միջոց է նաև մեղվի խայթոցի ինտենսիվությունը. մեղուն, երբ շատ է կծում, նշանակում է անձրև է գալու[48]։ Այգեձորցիները նկատել են, որ անձրևից առաջ մեղուն արագացնում է իր աշխատանքը։

Հետաքրքիր է, որ եղանակի փոփոխման հետ հայ ժողովուրդը կապել է նույնիսկ մրջյունների վարքը։ Սառիկյան Հակոբը նկատել է, որ երբ մրջյունները բնից «ձվանները» տեղափոխում են ապահով տեղ, դա երկարատև անձրևի նշան է, իսկ երբ նրանք աշխատում են հանգիստ, առանց շտապելու, ուրեմն պետք է լավ օր լինի[49]։ Համանման տեղեկություններ կան «Գիրք վաստակոցում», ուր ասվում է. «Յորժամ տեսանիս զմրջիւնքն, ուր զձուն իրեաց ի մէկ ծակէն ի մէկ այլև կրեն՝ նշան է անձրևի»[50]։

Այգեձորցի Աստուր Նաղարյանը մրջյունների վարմունքի միջոցով հետևյալ կերպ է կատարում եղանակի կարճժամկետային կանխագուշակում՝ մրջյունները, երբ մի ուղղությամբ տեղափոխվում են, քոչում են, ամենաուշը երեք ժամից հետո անձրև կգա[51]։ Եղանակի կարճժամկետային կանխագուշակում այգեձորցիները կատարում են նաև ճանճի միջոցով. ճանճը անձրևից մեկ-երկու ժամ առաջ ննջում, կպչում է պատին[52]։

Հայոց մեջ հատկապես տարածված են գորտի կռկռոցով կատարվող գուշակումները։ Այդեձորցի և Թովուզցի եղանակի գուշակները գիտեն, որ գորտերը երբ ջրի մեջ կռկռում են միաձայն և տագնապով, ապա ուժեղ անձրև կամ հեղեղ է լինում[53]։ Գորտի կռկռոցի միջոցով կատարվող կանխագուշակման մասին արժեքավոր տեղեկություն է պահպանվել Շիրակացու մատենագրության մեջ. «Յորժամ դորաք առ միմեանս ժողովին եւ կռչեն՝ զյուղմունս ամպոց նշանակեն եւ են գորտք որ կոչին գիւանիովնքն ճշմարտեն առաւել զժամանակս եւ այնպէս մանրիկք են՝ մինչ տրղկունք կտեն զնոսայ»[54]։

Թովուզցի Սահակ Կլեկչյանը գտնում է, որ գորտի ցամաքի վրայի կռկռոցն է անձրևի աղդակ[55]։ Կրծողներից միայն մկան միջոցով է կատարվել եղանակի կանխագուշակում, չնայած մեր ուսումնասիրած շրջաններում եղանակի կանխագուշակման այդ ձևը հայտնի չէ։ Գ. Մանդակունին այդ ձևի մասին գրում է. «Անձրևի նշաններն են, երբ մկները սովորականից ավելի կվազվզեն, գորտերը լճերի մեջ կկռկռան, որդերը բազմությամբ հողից դուրս կգան, մամուկները, սարդերը յուրեանց բուներից վայր կընկնեն, ճանճերը կծանրանան և ավելի սաստից կկծեն»[56]։ Ինչպես նշել է Ն. Հելմհոլցը, «Հնարավոր է, որ կենդանական աշխարհի առանձին ներկայացուցիչներ զգում են օդի իոնացումը, արևի ուլտրամանուշակագույն ճառագայթարձակումը, ռադիոակտիվությունը, ճընշման, քամու, ջերմաստիճանի միկրոփոփոխությունները, օդի քիմիական բաղադրությունը և այլն։ Մենք դեռևս շատ քիչ բան գիտենք այդ մասին, գրեթե ոչինչ չգիտենք և այն մասին, թե ինչ կապ ունեն այդ կարգի երևույթները եղանակի փոփոխության հետ։ Դուցե և այստեղ է թաքնված եղանակը կանխազգալու նրանց զարմանալի ունակությունը։ Այդ հարցը դեռ ուսումնասիրված չէ, և մեզ սպասում են հետաքրքիր հայտնագործություններ»[57]։

---

48 Նույն տեղում, էջ 12, 35։

49 Նույն տեղում, էջ 11։

50 «Գիրք վաստակոց», էջ 13։

51 ԴՆ, № 1, էջ 41։

52 Նույն տեղում, էջ 2։

53 Նույն տեղում, էջ 3, 43։

54 «Ա. Շիրակացու մատենագրությունը», էջ 351։

55 ԴՆ, № 1, էջ 41։

56 Գ. Մանդակունի, Նշվ. աշխ., էջ 400։

57 Н. Ф. Гельмгольц, Погода, приметы и народные поверья («Человек и стихия», М., 1966, с. 20—21).

Եղանակի կանխագուշակումը բույսերի միջոցով: Բույսերի մի քանի տեսակներ հնագույն ժամանակներից մարդիկ համարել են «եղանակի գուշակներ»։ Այսպես, հին հույները դիցաբանության մեջ ծիածանի աստվածուհի Իրիդայի անունով են կոչել ծաղկի մի տեսակը։ Թերևս դրա պատճառն այն է, որ իրիսներն էլ ծիածանի նման հայտնվում են անձրևից հետո և կամ այն, որ այդ գույները շատ նման են ծիածանի գույներին։ Ինչևէ, Հայկական լեռնաշխարհում ևս տարածված է ծաղկի այդ տեսակը և նույնպես կոչվում է «իրիս»։ Հավանաբար, հենց այս ծաղիկն ի նկատի ունեն նոյեմբերյանցիները, երբ ասում են. «ծաղկի մի տեսակ կա, հենց որ դուրս է գալիս, անձրևը դադարում է»։ Նրանք դուրս գալ ասելով հասկանում են բացվելը։ Ըստ Գ. Մանդակունու հաղորդած տեղեկությունների, անձրևի նշան են համարվում «երբ մկնականջ ասած խոտը, արևածաղիկը ու ուրիշ մի քանի տեսակ բույսեր ծաղիկները փակեն»[58]։ Թովուզցի Հուսեփ Արզումանյանի համոզմամբ, երբ կաղնու, սալորենու և այլ ծառերի տերևները թառամում են, մեկ-երկու ժամ հետո անձրև է գալիս[59]։

Մեր պատմագիրները գրեթե ոչ մի տեղեկություն չեն հաղորդել բույսերի միջոցով կատարվող եղանակի կանխագուշակումների մասին։ Այժմ մեր ժողովրդի մեջ տարածված է այն կարծիքը, որ երբ մասրենին, խնձորենին, խաղողի որթը ուշ աշնանը բերքը վրան նորից ծաղկում են, խստաշունչ ձմեռ է լինում։ Հնարավո՞ր է արդյոք այս ձևով նախապես իմանալ, թե ինչպիսի ձմեռ կլինի, հավանաբար ոչ, քանի որ բույսերի երկրորդ անգամ ծաղկելու պատճառը երկարատև, տաք և խոնավ աշունն է։ Դա ոչ թե ջուխտակ ձմեռվա նշան է, այլ բնության հերթական խաղ և, հավանաբար, երկարատև աշնան պատճառով է, որ սովորական ձմեռը, գուցե և ավելի ցուրտ և իհարկե ուշացումով եկած, թվում է խստաշունչ։

Գ. Մանդակունին տեղեկություններ է հաղորդում բույսերի միջոցով կատարվող ամբողջ տարվա եղանակի կանխագուշակման մասին. «Կաղնի ծառը եթե շատ պտուղ տայ՝ այն տարին շատ անձրև կլինի»[60]։ Գրեթե նույնանման մի տեղեկություն կա «Գիրք վաստակոցում», ուր, սակայն, կաղնու և այլ ծառերի պտուղների առատությամբ կանխագուշակվում է անձրև ընդհանրապես, այլ ոչ թե տվյալ տարվա համար[61]։

Ուշագրավ է այն փաստը, որ հայ ժողովուրդը բույսերի միջոցով եղանակի կանխագուշակումներ առավել շատ կատարում է գարնանը, այսինքն բույսերի վեգետացիայի շրջանում, մի շրջան, երբ բույսերն ավելի զգայուն են դառնում ջերմաստիճանի, խոնավության, լույսի և այլի նկատմամբ։ Այսպես, օրինակ, կողբացիները ասում են, որ ծառերը գարնանը, երբ ուշ են ծաղկում, նշանակում է, որ ցուրտ է սպասվում[62]։

Մեր ուսումնասիրած շրջանների բնակիչները եղանակը կանխագուշակում են նաև բույսերի շարժման միջոցով։ Նրանք նկատել են, որ երբ ծառերն առանց քամու դանդաղ շարժվում են, ապա անձրևում է[63]։

Թե որքան են հավանական բույսերի միջոցով վերոհիշյալ ձևով եղանակի կանխագուշակումները, առայժմ պարզ չէ։ Սակայն հայտնի է, որ բույսերի վրա մեծ ազդեցություն ունեն լույսը, ջերմաստիճանը, խոնավությունը և քամին, որոնք բույսերի կյանքում նրանց զարգացման տարբեր փուլերում կարող են ունենալ տարբեր ազդեցություններ։ Հավանաբար, վերոհիշյալ դոր-

---

58 Գ. Մանդակունի, նշվ. աշխ., էջ 400։

59 Դն, № 1, էջ 40։

60 Գ. Մանդակունի, նշվ. աշխ., էջ 397։

61 «Գիրք վաստակոց», էջ 13։

62 Դն, № 2, էջ 16։

63 Նույն տեղում, էջ 4։

ծոնների ազդեցությունների տակ բույսերի կրած յուրաքանչյուր փոփոխության (մարդու աչքին տեսանելի) ուսումնասիրությունն ու երկար տարիների պրակտիկ գործունեությունն է, որ մարդուն հնարավորություն է տվել բույսերի միջոցով նախապես իմանալ, թե ինչպիսին կլինի սպասվելիք եղանակը։

Եղանակի կանխատեսման ժողովրդական հնարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ աշխատավորը դարեր շարունակ եղանակը կանխատեսել է ուրույն մեթոդներով, որոնք դիմացել են ժամանակի քննությանը, և այժմ դրանց ուսումնասիրությունն ունի ազգագրական և օդերևութաբանական որոշակի նշանակություն։

НАРОДНЫЕ МЕТОДЫ ПРЕДСКАЗАНИЯ ПОГОДЫ ПО ЗЕМНЫМ ЯВЛЕНИЯМ

АЙКАНУШ ЗАТИКЯН

Резюме

Человек в процессе своей жизнедеятельности приобрел удивительные знания в области народной метеорологии. В условиях сложного и разнообразного рельефа Армянского нагорья народ предсказывал погоду как по земным, так и по небесным явлениям. К земным методам предсказания погоды относятся изменение поведения животных, птиц и насекомых, органы чувств человека, растения.